

# ՊՐՈՊՐԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆԴԻՇ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՆԱՄԻՐԸՎԵՆ

## ԵՐԵՎԱՆ ԱԿՑՈՒՄԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ. Բ. ԾՐՋԱՆ

1862

ԹԻՒ 13. ՕԳՈՍՏՈՍ 5

Հրատարակի տմից երկու անգամ . - Վեցումետյ գիրք է 5 ֆրանգ . - Խօմիքն դուրս է ֆրանք . - Անցնար նամակ կամ ծիռ չընդունուիր . - Կ'ուստակորուի Խօմիք ճացիկի գրաւենեակը . կիրիլ խան . - Խօմիքն դուրս Մեծարգոյ գործական են , Կ Պօշիս , Խ . Ձ . Գաղենակերեան . - Հաջեղ , Յ . Ս . Քիւրքեանօփ , - Փարիզ , M. A. Mourad , Rue des Dragons , 26.

## Ա. Օ. Դ.

ՄԵծարդոյ Ընթերցողք

Այս յառաջիկայ թուով Գարուն Հայաստանին իւր Բ . Շըանը կը թեակոխէ , և իւր երախտակիտականին անկեղծ զգացումները կը նուիիք բոլոր այն Յարդի և Շղգասէր Բաժանորդաց , որոց նըպաստիքը միայն իւր յառաջացման յարատեւթիւնը հնարին է վերստին յաջողիլ և շարունակել իւր ընթացքը ևս մի քանի Շըաններ :

Գարունը այս առթիւ կիմացընէ նաև որ իւր այս շըանին մէջ շատ անդամ Շղգային խորհրդածութիւններ և երբեմն երբեմն Բանագատութիւններ ընելու դիտաւորութիւն ունի : Բարեբաղդ պիտի համարի նա ինքզինքը , եթէ իւր ընթերցուաց հաջելի անցնելու յաջազդութիւնը ձեռք բերէ , ինչպէս և իւր մի և միակ նսպասակն է , այս է՝ Հայութը և օգտակար հանդիսանալ ամենուն :

Դուրսերէն եկած թէ Շղգային և թէ բանասիրական շահաւետ Յօդուածներ սիրով հրատարակելու պատրաստ է Գարունը , որովհետեւ իւր անպարէզը բաց է ամեն բանասիրներու :

## ՈԳԻՆ ՀԵՅՍՈՍՆԵՐՅՑ

Ա. Բ.

ՀԱՄՈՒԵԿ ՀԱՅԿԱԶՈՒԿԱՆ

ՅՈՒԱԽԵԾ Ե .

Սիրելի Արամեանք ,

Հայաստանի Գարունան միջոցաւ կը փութամ իմ

դաղափարներս ձեզի ուղղելով՝ քիչ շատ ձեր մէջը ծուռ զաղափար ունեցողներունը շտկել : Ես Հայաստանեայց Ողին , երբէք Հայաստանի սահմաններէն բաժնուելու վատութիւնը պիտի չունենամ : Որովհետեւ Հայաստանը , հետեւաբար անորմէ սեռեալ Հայ աղջը ինձի սիրելի է , և յաւիտեան սիրելի պիտի մայ , թէպէտեւ թշուառ վիճակի մէջ կը դտնուի այժմ . միթէ կարելի է չփիրել այն Շղգը՝ որ իւր լրւաւորութեան պահանձալի Ոսկեգաբը ունեցած էր :

Եթէ , ոմանք , Հայաստան աշխարհին այժման վիճակիը տեսնելով՝ կը զզան Հայ լինելուն վերայ և զայն չեն սիրեր , ես անսնցմէ չեմ , որովհետեւ չեմ ուզեր վատի , կեղծաւորի , անհաւատարմի և տգետի անուան արժանանալ , քանզի այսպիսիները . չեն դիտեր իրենց Շղգային պատմութիւնը , չեն ձանչեր իրենց Հայրենիքը . այն հոչակաւոր Աշխարհը՝ որուն բնակիչները երբեմն աշխարհիս քաղաքականացեալ , երեկէլի և քաջ Շղգ կարգն էին , իրենց աղդակից հզօր Գահականերու իշխանութեան ժամանակ . այն Աշխարհը՝ որ Արտաշէսեան Տիգրան Բ . Մեծ Արշակունի թագաւորին օրովք՝ Հոռվմայեցի աշխարհասասան և մարտիկ Շղգին . աչ կը պատճառէր , այն Աշխարհը՝ որ մարդկային աղդին խանձարուիր ու զիւտութեան և իմաստափրութեան կաթը առաջին անդամ շամբողներէն եղաւ . և շատ աղջերու լրւաւութեան , քաղաքակիթութեան և աշխարհաշխնութեան առաջնորդ լինելու պատիւն ունեցաւ : Այն Աշխարհը , կըսենք , որ երբեմն մեծամեծ , անուանի և սքանչելի քաղաքներով . և մեծազործութիւններով . կը փայլէր աշխարհի վերայ և “ Հանուրց Հիւսիսականաց վեհաղոյն էր ” :

Կռաջին անդամ քոնաւորութիւնը աշխարհիս

վրայէն բնաջինջ ընել ուզողը և Ազատութեան և Հայրենեաց նուիրական սիրոյն համար պատերազմողը և Բոնութեան եղջիւրները խոբակելով՝ Ազատութեան կենսահրաւեր կոթողը անկողը՝ մեր Ազգին առաջին Կահապետը և Կախահայրը Հայկն էր։ Առաջին անդամ քաղաքաշինութեան ետեւ եղողն գարձեալ նոյն ինքն Հայկն էր։ Կոյ Կահապետին գաղաղեղն և հաստաբազուկ թոռը։ Առոնք զիտանալով զգայուն սիրու ունեցող Հայ մի չկրնար չսիրել իւր Հայրենի Աշխարհը և չպատռել իւր Ազգը։

Արդի Հայը Օտար Ազգաց գերի, ծառայ և հպատակ է, անոնց ծանր և գժուարատար լուծին տակ կը ճնշուի, իւր հին փառքերը բոլորովին մոռնալով՝ չըջանար, հոգ անդամ չըներ զանոնիք երեան հանելու և դոնէ անոնց վերայ տեղեկութիւններ ստանալու։ ազգակից թագաւորներէ զուրկ, Հայրենիքէ զուրկ, անտերունջ, աներկիր և անպաշտպան՝ Քրիստոսէ անիծեալ թափառական Հրեային նման՝ աշխարհիս չորս կողմը, ասդիս անդին կը չըջի և միշտ օրաւուր փոխանակ Հայաստանի մերձենալու։ կը հեռանայ անորմէ թէ բարոյապէս և թէ նիւթապէս։

Բազմաթիւ խումբ մի օտար աշխարհներ կը ցրուի, անոնց մէջ՝ կը խառնուի, անոնց լեզուն կը խօսի, անոնց բարքն ու բնաւորութիւնը կըստանայ, անոնց կրօնքը կընդունի (աւ Գլ-ին-միջնորդութեամբ), ինչ Ազգէ յառաջ դալը և որպիսի. Քաջերէ սեռիլը կը մոռնայ, կանչետի, կը կորսուի օտար ազգերու մէջ՝ ինչպէս կաթիլ մի ջուր աշազին Ովկիանոսին մէջ։ Այսպէս ոչնչացեալ և կորսուած կը սեպուին՝ Հռոմէականացեալ, Ֆըռուանցացեալ, Հռոմայցեալ, Մուսացեալ, Քըռատացեալ և Ծրբացեալ բազմաթիւ Հայերը. արդարե աղետալի և ցաւառիթ կորուստ Հայկացն Ազգին համար, որուն պատճառ եղողները ինչ անուններու տեղատափ վրանին տեղացնելու հարկաւորութիւնը, թող ընթերցողք մակարերեն. բայց ինչ որ ընենք՝ ի զնւր. . . . Իշղածը եղած է ։ կըսէ Ռամկական առակ մի։ Ասոնց կորսուելովը և Հայաստանը կործանուելէ ետք՝ Հայոց կրած հալածաները և այլեայլ թշուառութիւնները՝ զՀայս որ երեսուն միլիոն կը կազմէին, հինգ միլիոնի հջուցին. . . .

Բարեբաղդաբար արդի թուոյն չորս մասերուն մին խորթացեալ և բաժանեալ Հայերն են. . . . Արց միանալը (մանաւանդ Պօլիսի Հռոմէական Հայերունը) խիստ դիրին է, և թէ երկու կող-

մանէ իոնչեմութեամբ և ազգասիրութեամբ լարուիլ զիտցուի . . . .

Միւս երեք մասերէն երկուքը՝ բոլորովին թանձրամած Տղիառութեան հրէջին ծանրոցիալ Ճիրաններուն ներքե անհողաբար և անտարբեր կը խորդան, իրենց ազգային պատմութեանը, ազգային ուգոյն, ազգային կատարելութիւններուն և փառքերուն վերայ ծանօթութիւն չունին։ Տղէտ, տմարդի մարդիկ են և իրենց մայրենի Ազգամաշխօս լեզունին հիմնովին մոռցած՝ կամ Տաճկերէն, կամ Յունարէն, կամ Մուսերէն, կամ Ջամարէն, կամ Պարտարէն, կամ Յաթարէն, կամ Պարտարէն, կամ Պարտարէն և կամ Յաթարէն կը խօսին. . . . Մարդութիւնը Ճանչող մարդու համար գժբաղդ վիճակ. . . . Այս տեսակ Հայերը՝ ինչ օգուտ ունին Հայոց Ազգութեան. — եթէ չկրթուին և չլուսաւորուին՝ Ոչինչ, — Ապա ուրեմն իրենց այժման կացութեան մէջ, կորսուածի պէտ են ասոնք ևս։

Մնաց մի մասը միայն, Հայ Ազգին ապագայ յոյսը. այս մասին մէջ զմոնուած Հայկացոնք՝ քիչ շատ լուսաւորութեան, քաղաքակրթութեան, ուսմանց, զիտութեանց և արուեստից սէր կը յուցընեն։ Ասոնց մէջ տարածուիլ սիսած է ազատուանց և Գեղարուեստից Ճաշակը, ազգային պատմութեան ողին, ասոնց ձեռքով միայն պիտի վատի Հայ Ազգին Լուսաւորութեան և Յառաջակիմութեան ջահը, որովհետեւ ասոնք այլ ազգասիրական ջաներէ և ազգօգուտ ընկերութիւններ կաղմելու հոգ ունենալէ զատ՝ երկու տարի առաջ՝ Ազգային փեկաւէտ Այսմանագրութիւնը հիմնելու համար անթիւ զոհողութեանց յանձնառու եղան։ Այս Սահմանադրութիւնն է ահա որ հոգի և կենակնութիւն պիտի այս Հայկացանց և մեծամեծ օգուտներ պիտի մատակարարէ իրենց՝ եթէ ըստ այնու վարուիլ զիտնան. . . . Ասոնց միջնորդութեամբ միայն կարելի է ընդհանուր Ազգը՝ ՚ի ՄԻՈՒԹԻՒԹԻՒՆ, և ՚ի ԱՀՐ Յորդութիւն։ Անոր միարքը Հայրենասիրութեան և Ազգասիրութեան զաղափարներով լցոնել, անոր սիրունցին հուրով վառել, ու անոր մարած սրտին մէջ նորէն արծարծել այն հին եռանդը, Հայկեան, Առանեան և Պարտանեան արխաւտութիւնն ըսել կուղեր։

Բայց այս մասին մէջ տեսած եմ շատերը՝ որ կը յուսահատին իրենց ազգային արդի ընդհանուր վիճակը տեսնելով. կողան անոր վերայ և երեմիական տխուր ողբեր կը յօրինեն՝ Հայատանի տիրագին աւերակաց և հին ու նսեմացեալ փառաց վերայ. . . .



Պատուաւոր՝ արչեստ է, ըսկինք, որովհետեւ  
արդի գարուս մէջ ես Եւրոպայի լուսաւորեալ աղ-  
գերուն մէջ եռանդ մի, ջանք մի կայ Երկրացոր-  
ծութիւնը իրենց հայրեննեաց մէջ տարածելու,  
մասնաւորապէս ուսումնական անձեր Ծնկերութիւն-  
ներու օգնութեամբ և հոգ պատրութեամբ շատ յա-  
ռաջ տարին, և օրաւոր աւելի յառաջադէմ զար-  
դացրնելու կը փութեան :

Երկրադորձութիւնը՝ Եւրոպայի մէջ մէծամեծ  
օգուտներ՝ մատակարարելէ զատ՝ շոտ հարստու-  
թիւններ ևս դիղեց և հետզհետէ կը դիզէ :  
Ամերիկա՝ իւր ունեցած այնչափ հարստութիւնը  
և բարեկեցութիւնը՝ երկրադորձութեան արհեստին  
կը սպարտառորի, որուն միջոցադ այնչափ յաջողու-  
թիւններ ունեցեր է :

Հին ազգաց և Կոր ազգաց պատմութեաններէն  
յայտնի է որ այն Աղջը՝ որ Երկրագործութեան ե-  
տեւ եղած է՝ միշտ փայլած է, և եղբոր զայն երե-  
սի վերայ ձգելով՝ շուայտութեանց և զեղխութեանց  
պատճառ եղող արուեստներու հետեած է, միշտ  
օրըսարօք վատթարութեան մէջ ինկած է : Ինչպէս  
Հին ժամանակ Եղիպատոն և Բարեկըն՝ իրենց Երկ-  
րագործութեանը պատճառաւ երեսի հանդիսացած  
են : Խոկ այն ժողովութեարձը՝ որոնք անփայթ ե-  
ղած են՝ ի մասին Երկրագործական աստուածառուր  
արհեստին՝ իրենց ունեցած կրթութիւնն ևս կո-  
րուսած են :

‘Կանի՞ Հռովմայեցիք ալ Երկրագործութիւնը  
Ճեղքէ չթողով՝ այնչափ զօրացած են. բայց երբ  
անտնք ալ երեսի վերայ Ճգեցին զայն երթալով  
վագիթարութեան. և ակարութեան մէջ ընկերմէան:

Երկրագործութիւնը երկրիս տակը թաղուած  
անթիւ զանձեռ երեանի իո չանէ :

Բնդէանուր Ըզզի երջանկութեան պատճառ  
լինի Երիքաղ ործութիւնը : Ասոր պարապող ժողով-  
ուրուգ մի միշտ իւր ժամանակը բաց օդոյ մէջ աշ-  
խատելով անցընելուն՝ հետեաբար մարմինը շատ  
ուժեղ և կորովի կը լինի և բնական զօրութիւն  
կը վայել : Մարմայ կօրովութիւնը՝ հասարակօ-  
րէն մժաց հաստատութիւն և կարողութիւն կը տայ  
և աղքատութիւն, նեղութիւն և չարքաշութիւն կը-  
րելու յարմար կը լինի, և թշուառութեան առջե-  
տիւր աղու նման չորնիկին :

Երկարագործութեան պարապող ժողովուրդ մի  
քաջութիւն և համարձակութիւն ես կըստանայ. Փոր-  
ձուած է Խրբառից մէջ որ բանակի մը համար երկ-  
րադ որդ նահանգներէն հաւաքուած զօրբերը միշտ  
ուրիշ քաղաքներէն և տեղերէն ժողովուածներէն  
աւելի զօրաւոր և աւելի կորուսի անուած են:

Այսպիսի ժաղվաւըդ մի բնականապէս, կըսէ  
Մատենագիր մի, բարեկարդ զի՞նակի մէջ կը լինի,  
վասն զի երկրատերերը՝ վարձկանէն, և վարձկանը  
աշխատառորէն մեծ լինելով, իբե՞նց տարբեր կար-  
դերը շատ դարեր մի և նայն բնականիքի մէջ եղած ի-  
պէս ձեերով կը մնան :

"Եթիւն անսպառ ծոցէն կելնէ խիստ թան-  
կաղին իրեր : Տձե , անարդ և թանձր զանցուած  
մի՝ շատ տեսակ ձևեր կառնու , և մեր իրմէ պահան-  
ջած ամեն բարիքները հետզետէ կը մասակարարէ  
մեզի : Աղօստ տիղմ մի հաղար տեսակ զեղեցիկ և  
հաճոյատեսիլ առարկաներու կը փոխակերպի . տա-  
րուան մի մէջ կը լինի՝ ոստ , կոկոն , տերե , ծա-  
ղիկ , պառուղ և սերմն՝ իւր առատութիւնները . 'ի  
չնորհս և 'ի նպաստ մարդկան նորոգելու . համար .  
Բան մի երկիրս չի սպառեր , իրեն խորերը որչափ  
պատռես և որչափ խառնես , այնչափ պատ և բեզ-  
մաւոր է : Ռ' յնչափ դարեցէ 'ի վեր՝ որոց մէջ ա-  
մեն բան իրմէ բղած էր , տակաւին մաշուած չէ ,  
բնաւ ծերութիւն մի զգաց , իւր խորերը դեռ մի և  
նոյն զանձերալ լի են : Հաղարաւոր սերունդներ  
իրենց օրերը իւր ծոցին մէջ անցուցին , ամեն բան  
ծերացաւ , հինցաւ , բայց 'ի իրմէ , պահն տարի  
Գարնան ժամանակ կը կենդանանայ : Անիկայ մարդ-  
կան բան մի չզլանար , ամեն բան կը տայ , բայց  
մարդկէ իրենց անմառութեամբը՝ զայն անմշակ և ե-  
րեսի վերայ թողարկ ձեռքերնեն ամեն բան կը  
փախցընեն . իրենց ծուլութեան և անկարդութիւն-  
ներուն պատճառաւ փուչերը և տատակները կաջին  
փոխանակ այդիներու և հունձքերու " (1) :

Երկիրը միշտ պատրաստ է իւր բարեքները  
տարածելու անոնց վերայ՝ որոնք զինքը մշակելով՝  
կը հոգան ու կը դարձանեն. իւր ծոցը բերմաւոր  
և անսպառէ. ժողովուրդ մի որչափ բազմաթիւ  
կուզէ թող լինի միայն թէ աշխատասէր լինի,  
միշտ առատութիւն կը վայելէ :

U<sup>נ</sup>מְגַבֵּל אֶת־עַמּוֹת בְּנֵי־עַמּוֹת

СЕЧЕНОВ ВАЛЕНТИН ГРОЗНЫЙ

(See U.S. Bureau, 1912, 1913).

**Աւրիցեն աշխագուման լուս եւ աշակ անհանդահայտ բնուց պառեն .**

4. —  $\tilde{W}^E$  բներ այնպիսի բան մի՝ որ կառէ մի

(1) **Phiên bản** là một khái niệm quan trọng trong



տուծոյ այս իրենց յանձնած սրբազն աւանդը, քնութեան և հայրենեաց :

Ինձ այսպէս երեխ, թէ տղու մը ծնանելէն անմիջապէս ետքը Աստուածային ձայն մը կը լսեմ որ կ'ըսէ ծնօղ մօրը . “ Աչա, կի՞ն դու, այս իմ բանական ստեղծուածս քեզի կը հաւատամ, տկար, անփորձ, զուրկ ամէն իմացականութենէ, քու խընամոցգ կը յանձնեմ ասոր մարմնական աճումը ու պահպանութիւնը . խնամով դաստիարակէ այս, ’ի բարին առաջնորդէ ասոր հոգին, դրոշմէ ասոր փափուկ սրտին մէջ թէ բանիւ և թէ քու օրինակներովդ բարոյականութեան ուղեղ արժանաւորութիւնները, պաշտօն առ իս, հնազանդութիւն օրինաց, և սէր առ ընկերն, ըրէ ասիկայ մարդ կատարեալ, աստուածապաշտ, հայրենասէր, ու մարդասէր : Թէ որ քու անհողութեամբդ ասիկայ բնական կամ քաղաքական օրինաց դատապարտութեան տակ իշնայ, թէ և ասոր հատուցումը պիտի ըլլայ ըստ արդարութեան յաւիտենական օրինաց, բայց ես քեզմէ ասոր բնական ու բարոյական կորուսը պիտի պահանջեմ ” :

Այս ու կնոջ մէջ թէ որ միաբանական սէր կայ, չոն է Ճշմարիտ ու կատարեալ երջանկութիւն, բայց ասիկայ ուղեղ դաստիարակութենէ կախեալ է : Բարեկարդ մայրերը անդադար ենթակայ չեն ըլլար առ տնին զբաղմանց, հասպա բաւական ազատ ժամանակ կունենան : Ո՛վ չզգար ապաքէն թէ ինչ զեղեցիկ տեսարան և ընտանեկան օդ տակարագոյն դործ պիտի ըլլար, եթէ մարդ իրենց պարապոյ ժամանակին մէկ մասը զոհին եկեղեցական, բարոյական, տնտեսական, և զրոց պատմութեան ընթերցմանը և ասոնք իրենց զաւկըներուն ալ սորվեցնէին : Զէ պարտ կանանց զերենք վատ խօսակցութեանց նուիրել : Պիտուարգոս կը պատմէ թէ Արգոսէն Դէլիսէլլա անուն հարուստ ու փառաւոր ցեղէ իշած կինը, տկարութեան ու սեամաղջութեան անբուժելի ախտին ենթակայ ըլլալով, Ապոլօնի պատգամախօսին հարցուց իրեն առողջանալուն համար, ան ալ պատասխանեց թէ պէտք է իր անձը Մուսայից պաշտամանը նուիրել . կինն ալ այնպէս ըրաւ, կանոնաւոր ուսման ու կրթութեան տալով զինքը, և այսպէս իր մարմնական զօրութիւնը ստացաւ ու երեկելի եղաւ կրթութեան ու առաքինութեան մէջ : Այս պատգամախօսը ուղեղ բանը ու փորձառութիւնն է, որ կը ցուցընէ թէ հոգւոյ ծայրագոյն անդործութիւնը՝ սեամաղջութիւն, մարմնոյ ջղերուն տկարութիւն և բարուց մնաս կը բերէ : Աստուած, քնութիւն, և

ուղիղ քաղաքականութիւնն ալ ամենայնիւ կը չը շմարտեն թէ պէտք է որ արք և կանայք սկիզբէն զաստիարակութիւն ընդունին, և իրենց պարապոյ ժամանակին՝ յարմար կրթութիւն ստանան : Ասոր համար ամէն բարեկարդ կտառավարութեան մէջ առաջին և ամենէն մեծ պարտք սեպուած է թէ հասարակաց և թէ մասնաւորի օգտին համար, հասարակաց վարժարաններու մէջ խոհեմ գրութեամբ, արանց և կանանց դաստիարակութեանը աղէկ հոգ տարութիւն, դպրոցներ ալ հաստատութիւն, որոնց մէջ պատիկ տղաք բարի սկզբունք ընդունելով, յետոյ կտառարելագործեն բարձրագոյն ուսմանց կրթութեամբ :

Յանք մասնութիւն  
Վաղարշակ Յորութիւննեան :

Ա. Զ. Գ. Ա. Տ. Ա. Ա. Օ. Ի. Ա. Կ. Ա. Բ.

Այն անձերը՝ որոնք իրենց բանը գործը մէկդի թողով՝ ընդհանրութեան օդ տին համար, ամեն բան ընկելու յանձնառու եղած են . որոնք իրենց խօսքով քարոզածը՝ զործքով կատարելու պատրաստ կը գտնուին միշտ, և մեծամեծ արգելներու դիմագրելով կը գործադրեն իսկ, Ազգային բարիք մի զործելու համար . ամեն բան աչք կտնունք իրենց իրաւունքը ձեռք անցընելու և զայն պաշտպանելու համար . ամեն բանի կը յաղթեն արիութեամբ և վերջապէս իրենց զըրութեամբ իրենց իրաւունքը ձեռք բերելու կարժանանան : Այսէի ըսածին պէս թէ “ Իրաւունքը զօրութեամբ միայն ձեռք կանցնի ” : Աչա այսպէս Ճշմարիտ Ազգասիրութեան օրինակ եղողներն ալ՝ իրենց Այսութեան և անհատներու մէկտեղելով՝ զօրութեամբ ձեռք կանցնեն իրենց հոգին ու կենդանութիւնը . . . . մանզ օրինակ լինին Պօլսեցի արդէ Հայրենասէրները . . . . Կեցցեն Ճշմարիտ Ազգասէրները . . . . :

Ա. Զ. Գ. Ա. Տ. Ա. Ա. Օ. Ի. Ա. Կ. Ա. Բ.

Մարդս ընկերական ստեղծուած է և ընկերութեամբ ապրելու պէտք ունի : Մարդս՝ քանի որ մարդ է, քանի որ ինութեան օրինաց հնազանդելու չափ բնական զացում և բանաւորութիւն ունի, անիկայ անհրաժեշտ պարտաւորութիւն . կը սեպէ իւր ընկերը եղբայրական սիրով սիրելու :



քին կողմը, Ճշմարիտ աղջամելք, Սահմանադրասելք անձի մը յանկարծ բանաժակութիլը լսելով, այնպիսի անձի մը, կըսենք, որուն գլուխը եկած գըժքաղդութիւնը՝ զույց վերջին աստիճան իւր Ազգը սիրելուն, անոր օգտին աշխատելուն, և անոր Յառաջդիմութեան համար արիւնք թափելուն համար լինի . . . Ի՞նչ և է այս գեպքը մեր սիրաը՝ ի խոր խոցեց, չենք դիմեր ուրիշներունը: —

### ՀԱՅ ԳՐԱԿԱՐԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶ

Հայ Գրաւորական ասովարէղին մէջ երեան ելոն երեք պարբերական Հանդէսներ ևս, փոխանակ Սահմանադրական Միութիւն և Յաւերգահարս Օմիւռնացի հանդէսներուն, որոնք գժրաղդարար քաժանորդի պակասութեան ախտին բռնուել լովդադրեցան իրենց ընթացքը շարունակելէ:

Փոխանակ անոնց՝ ի բերկրութիւն սրտի երեւան կելնեն երեք նոր Հանդէսներ, որոց յարատելն թացք և երկար կեանք կը բարեմաղթենք. . . .

Ասոնցմէ մին է կիթը լիլ տնուն, սրուն խմբադրութիւն է Հայկալն Օրիորդ մի Ելլիս, և Տաղամաճեան անուն, որ իւր Հանդիսին միջոցաւ Հրաւեր պիտի կարդայ Հայկալն Օրիորդներուն Լուսաւորութեան, Բարեկրթութեան, և Ազգասիրութեան ասպարէղը մտնելու:

Երկրորդն է ԶԵՖԻՆԻ ՀԱՅՐԵՆԵՑ, որուն անունեն յայտնի է թէ Ազգասէր Հայրենասէր և հետեաքար Բանասիրական օդտակար թերթ մի պիտի լինի:

Երրորդը կ. Պօլսոյ մէջ կը հրատարակուին:

Գանք երբորդին որ է Դիմուկ և կը հրատարակուի Օմիւռնիոյ մէջ, խմբագրութեամբ (Մեծարդոյ Պարոն Ա. Կարապետ Տէտէեան Ռւսումնական և աղջամէր երիտասարդին), որ կը խոստանայ իւր ընտանեկան և բանասիրական յօդուածներովը կըթել իւր ընթերցողները և այլ և այլ ողակատութիւններ երեան հանել Դիմակը երեսը գըշրած իւր Ափեղցիեղական մասովը: Այսպիսի հանդէս մի իւր տեսակին մէջ նոր է Հայ Ազգին մէջ, և կը յուսանք որ լաւ ընդունելութիւն գտնէ. Հասարակութենէ:

Եմեւ այլ խորիդածութիւններ.

— Սէր-Էիլ մը աղեցութիւնը. Յիբանի չկայ բարեկամ մի այնպէս ախործելի, ինչպէս սիրուչի

մը որ նէր ունի մեր վրայ. բայց առկէ, կնկան վըրայ արթուն զուարթութիւն մի կայ որ մարդուս տրամութիւնը կը հալածէ: Իւր դեղնցիութիւնը կը ցրուէ մեր սեւամաղձութիւնը (ու մամմութը). երեսին վրայ նկարուած է քաղցրութիւն և վատահութիւն, որ ուրախութիւն աւելի շասամկանար անոր զըւարթութեամբը: որ կնձռեալ Ճակատը ըշշակութիր անոր ժպիտովը: որ քարկութիւն դէմ կը կենայ անոր արտասուացը:

ՊԵՂԱԿԱՐՔԵՆ ու ԱՇԻ Բէկը.

— Սիրահարի մը հոգին որ կողմը երթայ՝ իւր սիրածին յիշատակը կը զանէ: Գիշերը, ցորեկը, առանձնութեան հանդարտութիւնը և տուներուն աղաղակը, նաև ժամանակն՝ որ այնչափ յիշատակը ներ կառնու կը տանի, վերջապէս բոլոր ասոնք չեն կրնար զնա հեռացնել անորմէ, կողմացոյցի ոլաքին նման, որուն երբ գոչին, որչափ որ շարժի, հանդարտելուն պէս՝ գարձեալ իսկոյն կը զանայ գէտ՝ ի բեկան, որ միշտ իրեն կը քաշէ զայն:

Կանայք անհաւատարիմ լինին ուր որ մարդիկ բռնաւոր են. խստութիւնը՝ ամեն տեղ խորաման, կութիւն յառաջ կը բերէ:

Կը տեսնեմ որ այս դատապարտեալ աշխարհի մէջ առաքինութենէ լաւ բան մի չկայ: Զանձրացած եմ մոլութենէ, որուն ամեն տեսակները Ճաշկած եմ:

Լոյն Պայտը.

Այս անձը՝ որ իւր ապազոյին հոգ շտանիր, անմիտ է և անհոգ. հետեաքար այն Ազգը՝ որ իւր ապազոյ բարօրութեանը հոգ շտանիր, անմիտ է և անհոգ:

### ՀԵՐՅՄՈՒՒՆՔ.

Ժ. Ի՞նչ է Եսութիւնը կամ Անձնասիրութիւնը և ի՞նչ վախճան կունենայ Անձնասէրն:

Ժ. Քիբսասի մահօւան ժամանակ ստուգի իւրողական խաւարումն տեղի ունեցած է:

ՀԱՅՐԵՆԻ ՏԵՍԱԿԱՐԱԿԱՆ  
Ք. Պ. Պ. ՊԱՐՏԻԶԱՆ

Զ. Մ. Ի. Ա. Ն. Ի. Ա.  
ԽԱՎԱՐՈՒՏԵԱՆ